ԿԱՐԾԻՔ

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց և վերջիններիս ընտանիքի անդամների կարգավիճակը կարգավորող առանձին իրավական ակտի մշակումը և ընդունումը միանշանակ ողջունելի է։

Այնուամենանիվ, քննարկման ներկայացված օրենքի նախագիծը պարունակումէ մի շարք բացեր, այդ թվում՝ խտրական մոտեցում է ցուցաբերում ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն չունեցող քաղաքացիական անձանց նկատմամբ, որոնք անհայտ կորել են հենց ռազմական գործողությունների հետևանքով։

1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց (այսուհետ՝ անհայտ կորած անձ) իրավական կարգավիճակը, սահմանում է անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքի անդամների, սոցիալական ապահովության, անհայտ կորած անձանց հետախուզման, հետախուզման դադարեցման, անհայտ կորած անձանց միասնական ռեեստրի ստեղծման և վարման, անհայտ կորած անձանց հարցերով լիազորված մարմինների, անհայտ կորած անձանց հարցերով հանձնաժողովի, անհայտ կորած անձանց հարցերով միջազգային համագործակցության հետ կապված հարաբերությունները։

Նշված դրույթում օգտագործվող «հետախուզում» եզրույթը պետք է փոխարինվի «որոնել» եզրույթով՝ ապահովելու գործող օրենսդրության հետ համապատասխանությունը։ Այդպես, Գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը 7 աշխատակարգը հաստատելու մասին ՀՀ վարչապետի N 1236-Ա որոշման մեջ օգտագործվում է որոնողական աշխատանքներ եզրույթը։ Ավելին՝ Ժնևի կոնվենցիաներով նույնպես սահմանված է «որոնելու» պարտավորություն (տե՛ս, օրինակ, *Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին Ժնևի կոնվենցիա*, հոդված 15, *կամ Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին Ժնևի կոնվենցիա*, հոդված 18)։

Օրենքը չի պարունակում դրույթներ, որոնք ուղղված են զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց անհայտ կորելը կանխարգելելուն ուղղված դրույթներ։ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի կողմից մշակված ուղենիշային սկզբունքների համաձայն[1]՝ ռազմական պայմաններում անհայտ կորած անձանց վերաբերյալ օրենքի կարգավորման առարկայի մեջ պետք է նաև ներառվի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք թույլ կտան նվազեցնել անհայտ կորելու հավանականությունը, այդ թվում՝ նպաստելու անձի կամ մահացածի նույնականացմանը։

[1] International Committee of the Red Cross. “Guiding Principles / Model Law on the Missing,” November 30, 2020. https://www.icrc.org/en/document/guiding-principles-model-law-missing-model-law.

2. Անհայտ կորած անձի սահմանում

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում տրվում է անհայտ կորած անձի հետևյալ սահմանումը՝ *զինծառայող, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ անձ, այդ թվում՝ մարտական գործողություններին մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողությունների շրջան մեկնած կամավորական, որն անհետացել է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում՝ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով, կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու, կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ, կամ հայտարարված զինադադարի ընթացքում կամ ռազմական գործողություններին հաջորդող եռամսյա ժամկետում խաղաղ պայմաններում, և նրա վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրվանից ծառայության կամ նրա մշտական բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի և ճակատագրի մասին.*

a. Զինծառայողի սահմանումը համահունչ չէ ՀՀ այլ օրենսդրական ակտերին, որոնք կարգավորում են զինծառայողի և մարտական գործողություններին մասնակցող անձի հասկացությունը: Այդպես՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում որպես զինծառայող նշված է նաև տարածքային պաշտպանությանը ներգրավված և մարտական գործողություններին մասնակցած անձը: Ավելին՝ նույն օրենքով կամավորագրված անձը նույնպես հավասարեցվում է զինծառայողի:

b. Սահմանման մեջ հետևյալ ձևակերպումը «*ստեղծված պայմաններում և հանգամանքներում՝ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով,* կամ..» տեղի է տալիս ռազմական գործողությունների նեղ մեկնաբանման և լծակ է ստեղծում ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված որոշակի իրավիճակներում անհայտ կորած անձանց օրենքի կարգավորման մեջ չներառելու և վերջինիս իրավունքները չապահովելու համար:

c. Նույն կետում օգտագործվում է «մարտական» և «ռազմական» գործողություններ եզրույթները, որոնց տարբերությունը մեկնաբանված չէ կամ փոխեփոխ օգտագործման մասին որևէ նշում առկա չէ:

d. Նշված սահմանումը ընդրգկուն չէ և չի ներառում ռազմական գործողությունների համատեքստում ծառայողական տարատեսակ պարտականություններ կատարող անձանց, օրինակ՝ ոստիկանների, փրկարար ծառայության ծառայողների և այլն: Հատկանշական է, որ գործնականում նշված ծառայությունների ծառայողները անհայտ կորել են մինչ օրս ՀՀ մասնակցությամբ ռազմական գործողությունների համատեքստում, որի մասին վկայում է նաև անհայտ կորած անձանց ընտանիքների համար նախատեսված Կառավարության ծրագրերը[2]: Սահմանումը չի ներառում նաև ազատամարտիկների, եթե նրանց մասնակցությունը տեղի չի ունեցել կամավորագրվելու արդյունքում:

[2] Տե՛ս ՀՀ կառավարության 10 դեկտեմբերի 2020 թ. N 2001-Լ որոշում

e. Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության 23 հոկտեմբերի 2000 թվականի N 663 որոշմամբ սահմանվել է Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օր[3]:

f. Նշված սահմանումը չի ներառում այն քաղաքացիական անձանց, որոնք անհայտ կորել են ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում: Ինչպես 1990-ականների առաջին կեսին տեղի ունեցած ռազմական գործողությունների համատեքստում, այնպես էլ 2020 թվականի 44-օրյա պատերազմի և 2023 թվականի սեպտեմբերի 19-ին և դրանից հետո Լեռնային Ղարաբաղի վրա ռազմական հարձակման արդյունքում անհայտ կորել են տասնյակ քաղաքացիական անձինք, ինչը հաստատվում է նաև ՀՀ քննչական կոմիտեի կողմից պաշտոնապես հրապարակված տեղեկություններով:

1949 թվականի Ժնևի կոնվենցիաները և միջազգային մարդասիրական իրավունքի սովորութային նորմերը սահմանում են անհայտ կորած անձին որոնելու ու ճակատագիրը պարզելու պարտավորություն և դրանից բխող՝ ընտանիքի անդամի «իմանալու» իրավունքը ինչպես ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն ունեցող, այնպես էլ՝ չունեցող, այն է՝ քաղաքացիական անձանց առնչությամբ[4]:

Ավելին՝ Գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի իրավասությունների մեջ որևէ տարբերակում առկա չէ՝ կախված անհայտ կորած անձի կարգավիճակից (կոմբատանտ, թե քաղաքացիական անձ)[5]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա Օրենքի նախագիծը կարգավորում է նաև անհայտ կորած անձանց հարցերով հանձնաժողովի գործունեության հետ կապված հարցերը, ապա նախատեսված տարբերակումը հիմնավոր չէ: Ավելին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածով սահմանվում է ինչպես զինծառայողների, այնպես էլ զինծառայող չհանդիսացող այլ անձանց, այսինքն՝ այդ թվում՝ քաղաքացիական անձանց ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորելու՝ դատարանի կողմից անհայտ բացակայող ճանաչվելու ժամկետը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նույնպես տարբերակում չունի ռազմական գործողությունների հետևանքով անհայտ բացակայող զինծառայողների և քաղաքացիական անձանց միջև (տե՛ս Գլուխ 33):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհայտ կորելու պայմանները նույնն են, միջազգային կոնվենցիաներից բխող պարտավորությունները վերաբերում են ինչպես զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց, այնպես էլ քաղաքացիական անձանց, իսկ առանձին որևէ իրավական ակտ չի կարգավորում ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած քաղաքացիական անձանց և վերջինների ընտանիքների անդամների կարգավիճակը, ապա նշված խմբի չներառելը հանդիսանում է տարբերակված մոտեցում, որը չունի իրավաչափ հիմնավորում, այսինքն՝ խտրական է:

---

[3] https://www.irtek.am/views/act.aspx?aid=11431

[4] Տե՛ս Ժնևի կոնվենցիա (ԺԿ) I, 15-17-րդ հոդվածներ; ԺԿ II, 18-20-րդ հոդվածներ; ԺԿ III, 120-124-րդ հոդվածներ; ԺԿ IV, 16-րդ, 136-141-րդ հոդվածներ; Լրացուցիչ արձանագրություն I , 32-34-րդ հոդվածներ, Լրացուցիչ արձանագրություն II, 8-րդ հոդված; սովորութային իրավունքի նորմ 117, https://ihl-databases.icrc.org/en/customary-ihl/v1/rule117

[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=170693

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նշված կետը շարադրել հետևյալ կերպ.

անհայտ կորած անձ՝

ա) *զինծառայող, այդ թվում՝* **տարածքային պաշտպանությանը ներգրավված և մարտական գործողություններին մասնակցած կամ** *զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ անձ, այդ թվում՝ մարտական գործողություններին մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողությունների շրջան մեկնած կամավորական, որն անհայտ կորել է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում, կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու, կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ, կամ հայտարարված զինադադարի ընթացքում կամ ռազմական գործողություններին հաջորդող եռամսյա ժամկետում խաղաղ պայմաններում, և նրա վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրվանից ծառայության կամ նրա մշտական բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի և ճակատագրի մասին.*

Հոդվածում անհայտ կորած անձի սահմանումը լրացնել.

բ) նախատեսել այնպիսի սահմանում, որը կներառի մարտական գործողությունների համատեքստում՝ մարտական գործողություններին չմասնակցող և ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ անհայտ կորած ծառայողներին, այդ թվում՝ ոստիկաններին, փրկարարներին և այլն:

գ) քաղաքացիական անձ, ***որն անհայտ կորել է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում , այդ թվում նաև՝ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով կամ հայտարարված զինադադարի ընթացքում կամ ռազմական գործողություններին հաջորդող եռամսյա ժամկետում խաղաղ պայմաններում, և նրա վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրվանից նրա մշտական բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի և ճակատագրի մասին:***

3. Անհայտ կորած անձի ընտանիքի անդամներ

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում տրվում է անհայտ կորած անձի ընտանիքի անդամի հետևյալ սահմանումը

2) ***անհայտ կորած անձի ընտանիքի անդամներ՝*** *ամուսին (կին), զավակ, ծնող, պապ, տատ, թոռ, եղբայր, քույր, որդեգրող, որդեգրված, խնամակալ, հոգաբարձու, խնամարկյալ, հոգաբարձության ներքո գտնվող անձ (բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածում նշված դեպքերի).*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված շրջանակը չի տարածվում օրենքի 7-րդ հոդվածում նշված դեպքերի, այլ կիրառելի է մարդասիրական բնույթ ունեցող ոլորտներում, այդ թվում՝ անհայտ կորած անձի ճակատագիրը պարզելու ուղղությամբ, առաջարկում ենք ընդլայնել ընտանիքի անդամների ցանկը: Նախ, ի տարբերություն ԿԽՄԿ կողմից մշակված մոդելային օրենքի՝ օրենքի նախագծում տեղ գտած սահմանումը չի ներառում չգրանցված՝ փաստացի ամուսնության մեջ գտնվող ամուսնուն/կնոջը, ինչպես նաև համամայր/համահայր եղբայրներին և քույրերին: Հատկապես 2020 թվականի 44-օրյա պատերազմի համատեքստում անհայտ կորած անձանց ընտանիքների անդամների հետ աշխատանքի ընթացքում «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից արձանագրվել են դեպքեր, երբ անձը գտնվել է չգրանցված ամուսնության մեջ, այնուամենայնիվ, փաստացի ամուսինը զրկված է եղել որոշակի արտոնություններից օգտվելու հնարավորությունից: Ավելին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մսի համաձայն՝ «Շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել..», այսինքն՝ որոշ գործողությունների համատեքստում օրենսդիրը նախատեսել է ավելի լայն շրջանակ, քան ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանվածը:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերով հաստատվել է, որ «ընտանիք» հասկացության ներքո ներառվում են ոչ միայն ամուսնական հարաբերություններ ունեցող զույգերը, այլև դե ֆակտո «ընտանիքը», որտեղ կողմերը միասին ապրում են առանց գրանցված ամուսնության (see *Elsholz v. Germany* [GC], no. 25735/94, § 43, ECHR 2000-VIII; *Keegan v. Ireland*, 26 May 1994, § 44, Series A no. 290; and *Johnston and Others v. Ireland*, 18 December 1986, § 56, Series A no. 112).

Գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին ՀՀ վարչապետի N 1236-Ա որոշման մեջ օգտագործվում է «հարազատներ» եզրույթը, որը բավականին լայն է՝ ներառելու անհայտ կորած անձի ճակատագրով համապատասխան հետաքրքրություն ունեցող անձանց լայն շրջանակ: Ըստ ՀՀ սահմանադրական դաարանի՝ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն[6]:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք անհայտ կորած անձի ընտանիքի անդամների ցանկում ներառել թեև գրանցված ամուսնության մեջ չգտնվող, սակայն անհայտ կորած անձի հետ միասին ապրող/բնակվող զուգընկերոջը՝ անկախ համատեղ երեխա ունենալու հանգամանքից, համահայր/համամայր քրոջն ու եղբորը:

[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=43081

4. Անհայտ կորած անձի վերաբերյալ նվազագույն տեղեկատվության շրջանակը

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում *«Անհայտ կորած անձի վերաբերյալ նվազագույն տեղեկատվություն»* սահմանումը խմբագրել հետևյալ կերպ՝ ավելացնելով մգեցված տեղեկությունները.

անհայտ կորած անձի վերաբերյալ նվազագույն տեղեկատվություն՝ հնարավորության դեպքում՝ անհայտ կորած անձի անունը, ազգանունը, **հայրանունը,** սեռը, ծննդյան վայրը և ամսաթիվը, անհայտ կորած անձի ամուսնական կարգավիճակը, անհայտ կորած անձի մասնագիտությունը և զբաղվածության մասին տեղեկություններ, **իսկ զինծառայողի դեպքում՝ անհայտ կորած անձի կոչումը**, անհայտ կորած անձի **հաշվառման և փաստացի բնակության** հասցեն/հասցեները, վայրը, օրը և ժամը, երբ անձին վերջին անգամ ողջ են տեսել, անհետացման հանգամանքները, այն հագուստը, որը նկարագրում է ընտանիքի անդամը կամ անհայտ կորածին վերջին տեսած անձը, անձնական իրեր, որոնք սովորաբար կրում է անհայտ կորած անձը, կամ իր մոտ պահում է անհայտ կորած անձը, **այն անձանց տվյալները, ովքեր վերջինն են տեսել անհայտ կորած անձին, ինչպես նաև նույնականացման համար նպաստող այլ տվյալներ, այդ թվում՝ արտաքին ֆիզիկական տվյալներ, օրինակ, դաջվածք, սպի, բժշկական, այդ թվում՝ վիրահատական և ստոմոտոլոգիական պատմության տվյալներ**։

5. Անհայտ կորած անձանց մարմինների /մասունքների/ նույնականացում

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ **անհայտ կորած անձանց մարմինների (մասունքների) նույնականացում**՝ անհայտ կորած անձանց մարմինների (մասունքների) վերաբերյալ ստացված բոլոր, այդ թվում՝ փորձագիտական (լաբորատոր) հետազոտական համալիր միջոցառումների արդյունքում ստացված **տեղեկությունների, նյութերի, նմուշների համադրում**՝ ուղղված չճանաչված մարմնի անձը պարզելուն.

Թեև Նախագծի Գլուխ 6-ը կոչվում է **Անհայտ կորած անձանց մարմինների (մասունքների) հետախուզումը, նույնականացումը, արտաշիրիմումը և դրանց նկատմամբ վերաբերմունքը»,** դրա միակ 19-րդ հոդվածը որևէ հստակ ընթացակարգ չի սահմանում անհայտ կորած անձանց մարմինների կամ մասունքների նույնականացման վերաբերյալ, այդ թվում՝ դրա իրավասություն ունեցող մարմնի վերաբերյալ։
Նույնականացման վերաբերյալ Օրենքում առկա կարգավորումները չեն համապատասպանում իրավական որոշակիության սկզբունքին և պետք է հստակեցվեն՝ ապահովելու անձի ճականագիրը պարզելն ապահովող հստակ, անվիճելի և ընդունելի արդյունք։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Օրենքով սահմանել անհայտ կորած անձանց մարմինների (մասունքներ) նույնականացման իրավասություն ունեցող լիազոր մարմինը և անհրաժեշտ գործողությունները, ինչպես նաև ադրունքների անվիճելիությունը։

6. Օրենքի 7-րդ հոդվածը պարունակում է կարգավորումներ, որոնք վերաբերում են զոհված անձանց։

7. Օրենքի Գլուխ 3-ով նախատեսված մինչգերատեսչական հանձնաժողովի լիազորությունները, հատկապես տեղեկատվության հավաքագրման և այլ պետական մարմիններից ստացման առումով պետք է լինի այլ պետական մարմինների համար կատարման համար պարտադիր։

8. Անհայտ կորած անձանց հաշվառման և (կամ) հետախուզման համար լիազորված այլ մարմինների նախատեսումը կրկին շեղում է միասնական լիազոր մարմին ունենալուց և ստեղծում է իրավական անորոշակիություն, որը թուլացնում է մինչգերատեսչական հանձնաժողովի դերը։

9. Մինչգերատեսչական հանձնաժողովի լիազորությունները թույլ են և չեն համապատասխանում լավ պրակտիկային, ուստի նվազեցնելու են նշված մարմնի և ընդհանրապես անհայտ կորած անձի ճակատագիրը պարզելուն ուղղված գործողությունները։

10. Անհրաժեշտ է սահմանել մինչգերտեսչական հանձնա-ղովի շրջանակում թեմատիկ աշխատանքային խմբերի առկայությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը զբաղվում է և՛ գերիների ու պատանդների, և՛ անհայտ կորած անձանց հարցերով։